ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս իրենից անկախ պատճառներից ստիպուած եղաւ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսները միացնել և ուշ հրատարակել։

«Արարատի» խմբագրութիւնը ցանկանալով ըստ կարողութեան հետաքրքիր դարձնել ամսագիրը և, որքան թերթի ծաւալը ներում է բաւարար նիւթ տալ ընթերցանութեան համար, դիմում է հայ գրագէտներին և ուսուցիչներին խնդրելով նրանց աշխատակցութիւնը։

«Արարատում» բացի կրօնական—բարոյական յօդուածներից, կարևոր տեղ պիտի յատկացուի նաև մանկավարժական, գրական—բանասիրական ու պատմական յօդուածների և ուսումնասիրութիւնների։

Առանձին ուշադրութիւն պիտի դարձուի ոչ միայն մեր և օտար ազգերի եկեղեցական կեանքին, այլ և հայ կեանքին ընդհանրապէս։

Ստացած ամեն գրքի մասին մատենախօսութիւն գրել կը տրուի ձեռնհաս անձերի։

Ցանկալի է, որ ուղարկուած յօդուածները երկար չարունակելի չլինին։

Յօդուածների համար կը տրուի վարձատրութիւն կամ գրամով, կամ յօդուածների արտատպութեամբ «Արարատի» դիրքով։ Վարձատրութեան չափը կամ արտատպած օրինակների թիւը կորոշէ խմբագրութիւնը։ Եթէ յօդուածագրի կողմից որ և է ցանկութիւն չէ յայտնուած վարձատրութեան մասին, յօդուածը չի վարձատրուիլ։ Չեն վարձատրուում նաև վեց երեսից պակաս պատահական յօդուածներ, ինչպէս և թղթակցութիւններն ու պատասխանները։

Խմբագրութիւնն ազատ է համարում իրեն՝ յօդուածները կրճատելու, եթէ յօդուածագիրն առաջուց պայման չէ դրել անփոփոխ տպագրելու։

Թարգմանութիւններ ուղարկելիս պէտք է յիշատակել բնագիրը (հեղինակ և լեզու) և, եթէ կարելի է, ուղարկել նաև բնագիրը, որ յետ կը դարձուի ուղարկողին։

Զտպուած փոքր նիւթերը չեն վերադարձւում, իսկ մեծ յօդուածները վերադարձւում են յօդուածագիրների հաշուով։ Զտպուելիք նիւթերի մասին կը յայտնուի «Արարատում»։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

«Արարատ»-ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացել է հետևեալ հրատարակութիւնները.

1. Հայ գրի և տպագրութեան Մեծ Յոբելեան. 412—1512—1912. Գրեց Գէորգ Ալթունեան ս. Էջմիածնի հրատարակութիւն. գինն է 10 կոպ.
2. Տեղեկագիր 1911/12 ուսումն. տարուայ Վրաստանի և Իմերէթի Հայոց թեմի եկեղ. ծխ. տարրական դպրոցների. Թիֆլիզ 1912 թ.
3. Մեթոդական գործնական ցուցմունքներ. Յ. Տէր Միրաքեան. Թիֆլիզ 1912 թ. գինն է 20 կոպ.
4. Армяно-Григоріанскій Календарь 1913 г. состовилъ свящ. С. Теръ-Ованесянцъ. цѣна 20 к. Ставраполь.
5. «Նոր երգեր» Ս. Յովհաննիսեանի. 1912 թ. Բագու. գինն է 20 կոպ.
6. «Հայրենի աւերակները»—Պետրոս Մոճոռեանի. Ալէքսանդրապոլ 1912 թ. գինն է 20 կոպ.
7. Արթուր Շնիցլերի Երկերի ժողովածու. հատոր Ա. Մոսկուա. հեղինակի պատկերով և պ. Մակինցեանի խմբագրութեամբ ու կենսաքննական ակնարկով։ Հրատարակութիւն «Պանթէոն»-ի. գինն է մէկ ռուբլի.
8. Մանեա. պատմուածք Ս. Թորոսեանի. Պոսթոն. 1912 թ.